

Քրիստոնեաներ դեռ կերպով մի բռնադատուած էին մարտիրոսական դարերու կեանքն ապրիլ եւ ջատագովել իրենց դաւանանքը Իսլամի եւ Տրէի դէմ: Ասան զե ասդին անդին տեղի ունեցող նա-
հատակութիւններ եւ կրօնափոխութիւններ յայ-
տնի իրողութիւններ են. իսկ Նալեանի (= Յա-
կոբ Աստուածաբանի) Հրէից դէմ գրած առար-
կութիւններն ու ջատագովութիւնները բարացու-
ցական են եւ մեծ արժէք ունին դարու վրայ
կրօնախօսական վերլուծումներ ընելու համար:

Արլոտի Մատենադարանին ուսումնասիրու-
թիւնն այսպիսի խորհրդածութիւններու ընդար-
ձակ հորիզոններ կը բանայ եւ մենք զինքը, Ար-
լոտը, կը գտնենք իր բուն գործին մէջ:

Արօնական ներքին ու արտաքին այս վտան-
գաւոր ելեւէջներուն մէջ, ստոյգ է որ Հայ Ազգին
լուսաւորութիւնը ս' եւ է աստիճանով, օգտակար
պիտի ըլլար եւ պիտի դիւրացընէր Արլոտի բաղ-
ձանքներուն իրականացումը:

Եթէ անհրաժեշտ էր այս լուսաւորութեան
համար ժամանակը յուզող կրօնական խնդիրներու
ուսումնասիրութիւնը՝ կազմակերպուած Գպրոցի
մ'աշխատութեամբ, եթէ ամէնէն դրական եւ
օգտական ծրագիր մ'էր ընթերցասիրութեան
եռանդ մ'արծարծել հայ ժողովուրդին մէջ,
եռանդ մը՝ որ տեւէր, գործէր եւ արդիւնաւորուէր.
բոլորովին միակողմանի պիտի ըլլար այս եռանդը
ապահովել ազգի մէջ միմիայն կրօնական գրքերու
հայացումով:

Ո՛րչափ ալ Արլոտին Գպրոցը այսպիսի միա-
կողմանի լուսաւորութեան մը գաղափարը տայ,
բայց իրողութիւնը տարբեր է բոլորովին: Ասան
զի Արլոտ Ազգին լուսաւորութեան համար
երբ մէկ կողմէն այլազգի (= օտար) Մատենա-
գրութիւնը կը հայացընէ, միւս կողմէն ձեռք
կ'առնու հայ ազգի մատենագրութիւնն եւ շնորհ-